համար թիվ 3 համաձայնագրով նախատեսված աշխատանքների կատարման համար: Այսինքն՝ պայմանագրի մասնակի լուծման համար հիմք է հանդիսացել Հայցվորի կողմից 2023թ. համար նախատեսված շինաշխատանքները ժամանակին ամբողջությամբ չկատարելը, իսկ այդ ժամանակ «ՑԱՆԻՆԱ» ՍՊԸ-ի հետ կնքված էր համաձայնագիր, որի ուժով նա ունեցել է իրավասություն Հայցվորին պատվիրված շինաշխատանքների նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու, և պատճառաբանել, որ 2024թ. նրա հետ չի կնքվել նոր համաձայնագիր՝ տեխնիկական հսկողություն իրականացնելու 2023թ. աշխատանքների համար, անթույլատրելի է:

Անդրադառնալով հայցվորի ներկայացուցչի կողմից 30.07.2024թ. ներկայացված դիրքորոշմանը, որ «պատասխանողի կողմից, հայցվոր ընկերությանը, օրենքով սահմանված հնգօրյա ժամկետում, հայցադիմումի պատասխան կամ որևէ այլ փաստաթղթեր չեն ներկայացվել, ուստի հաշվի առնելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6 հոդվածի 3-րդ մասի իրավակարգավորումը գտնում են, որ գործը պետք է քննվի դրանում առկա ապացույցների հիման վրա, իսկ հայցվորի վկայակոչած այն փաստերը, որոնք ենթակա են հաստատման պատասխանողի տիրապետման տակ գտնվող ապացույցներով, պետք է համարվեն հաստատված», ապա Դատարանն այն գնահատում է անհիմն, քանի որ հայցադիմումի պատասխանը և կից փաստաթղթերը ներկակացվել են պատասխանողի ներկայացուցչի կողմից հայցադիմումը վարույթ ընդունելու և պատասխանողից ապացույցներ պահանջելու մասին որոշումները ստանալուց հետո օրենքով սահմանված հնգօրյա ժամկետում՝ այսինքն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6 հոդվածի 3-րդ մասով սահմանված ժամկետում:

Ամփոփելով վերոգրյալները՝ Դատարանը գտնում է, որ հայցվորի հայցն անհիմն է և ենթակա է մերժման:

Հայցի ապահովման միջոցի պահպանման հարցի լուծում.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 136-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հայցը մերժելու մասին վճիռ կայացվելու դեպքում հայցի ապահովման միջոցները պահպանվում են մինչև վճռի օրինական ուժի մեջ մտնելը:

Տվյալ դեպքում Դատարանը գտնում է, որ 18.06.2024թ. և 30.07.2024թ. որոշումներով կիրառված հայցի ապահովման միջոցները պետք է պահպանել մինչև սույն վճռի օրինական ուժի մեջ մտնելը, այնուհետև վերացնել:

Դատական ծախսերի բաշխման հարցի լուծում.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Հաշվի առնելով, որ հայցվորը նախապես վճարել է անհրաժեշտ պետական տուրքի գումարը, իսկ հայցը մերժվում է, ուստի Դատարանը գտնում է, որ Դատական ծախսերի հարցը պետք է համարել լուծված:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ, 109-րդ, 189-րդ, 191-192-րդ, 198-րդ, 234.12-րդ հոդվածներով, Դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

«ԵՐԱՆՈՍՇԻՆ» ՍՊ ընկերության հայցն ընդդեմ ՀՀ պաշտպանության նախարարության՝ ՀՀ պաշտպանության նախարարության և «ԵՐԱՆՈՍՇԻՆ» ՍՊԸ-ի

միջև 23.07.21թ. կնքված թիվ «ՓՆՄԱԾՁԲ-21-10/10-2» ծածկագրով գնման պայմանագիրը ՀՀ պաշտպանության նախարարության կողմից միակողմանի լուծելու մասին 22.05.2024թ. որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, մերժել:

Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

Դատարանի 18.06.2024թ. և 30.07.2024թ. որոշումներով կիրառված հայցի ապահովման միջոցները պահպանել մինչև սույն վճռի օրինական ուժի մեջ մտնելը, այնուհետև վերացնել:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ վճռի հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ՝ **Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am